Զատիկն, և յաղագս լուսոյն՝ բանք մեր ստոյգ համարեցան, և այսպիսի ստութեամբ մատնեցին զնոսա 'ի բանտս և 'ի տուգանս, և խռովութեամբ լցեալ զաշխարհն, առիթ եղեն բազմապատիկ վնասուց. ապա խնդրեցին հրովարտակ, զի բարձցին նովաւ բռնութիւնք Հայոց, և մի լսելի լինիցին բանք նոցա. զի եթէ ոչ զդաստասցին՝ դատաւորք ծանուսցեն զանուանս նոցա 'ի Դուռն՝ 'ի կրել պատիժ պատուհասի, \\Հ\ (1729)։ Գրեցաւ հրովարտակ առ ամենայն դատաւորս և իշխանս արեւելեան դաւառաց, տեսանել արդարութեամբ զվէճս նոցա և լուծանել օրինօք դատարանի։ Առեալ Ցունաց զայս հրովարտակ՝ ետուն 'ի ձեռս Եուսուֆ անուն առն ուրումն կեսարացւոյ, որ էր այր ժանտ և չարաբարոյ, և առաքեցին յարեւելեան դաւառս։ Հասեալ նորա 'ի Կեսարիա Կապադովկացւոց՝ ետ արձանագրել զայն 'ի դատարանի, և էառ անտի գիր ըստ մտաց հրովարտակին։ Յետ այնորիկ կոչեաց դատաւորն զզլխաւորս երկուց ազգաց, եւ ընթերցեալ առաջի նոցա եհարց՝ թէ իցե՞ն այնպիսի վէճ 'ի միջի իւրեանց սակս տօնի Զատկին, և նոքա ասեն՝ թէ գուցէ լուեալ է մեր զայդպիսի անուն խռովութեան, զի ահա կամք 'ի քաղաքիս յայսմիկ սիրով եւ խաղաղութեամբ ընդ միմեանս. լուեալ դատաւորին զբանս նոցա՝ ազդ արար 'ի Դուռն, թէ չեն պատահեալ այնպիսի իրք 'ի քաղաքին։ Եւ տեսեալ թէ ոչ դադարի Եուսուֆ աղմկելոյ զքաղաքն և խռովելոյ զժողովուրդն, և յարուցանելոյ զնոսա ընդդէմ միմեանց՝ հալածեաց զնա 'ի քաղաքէ անտի։ Եւ նորա փախուցեալ անտի՝ գնաց 'ի քաղաքն Եւդոկիայ, և սկսաւ յայտնել անդ զչարութիւն իւր, որպէս արարեալէր 'ի Կեսարիա։

Ի կոչել դատաւորին զառաջնորդս և զզլխաւորս ժողովրդոց երկուց ազգաց, և յընթեռնուլ զհրովարտակն և 'ի հարցանել ցնոսա, Ցոյնք զարմացեալ ետուն պատասխանի. թէ ոչ օք 'ի Հայոց բնակելոց 'ի քաղաքիս յարուցեալէ վէճս, և կամ ասացեալ բան ինչ վասն տօնի Զատկին. և նա ծանոյց 'ի Դուռն զխաղաղութիւն ժողովրդոց քաղաքին։ Սակայն Եուսուֆ ոչ դադարէր յայտնի և 'ի ծածուկ դրդռել զժողովուրդն Ցունաց ընդդէմ Հայոց։ Զնոյն արար 'ի Մարսվան, Յամասիա, 'ի Զիլէ, 'ի Նիկսար և